«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի N 06-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«____ » _____ 20 թ. **N** _____**Ն**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի N 06-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի օգոստոսի 23-ի «Քաղաքաշինության բնագավառում

շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառումների կազմակերպմանը, իրականացմանը և մասնակցությանը ներկայացվող պահանջները և շարունակական մասնագիտական զարգացման յուրաքանչյուր տեսակի գծով շնորհվող կրեդիտների քանակը և դրանց շնորհման չափորոշիչները հաստատելու մասին» N 06-Ն հրամանի.

1) 1-ին հավելվածի 3-րդ կետի 14-րդ մասով հաստատված Աղյուսակ N 1-ի՝

ա) 7, 8, 9, 10-րդ տողերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

07	Էլեկտրաէներգետիկ ճարտարագետ նախագծող	Էներգետիկա Էլեկտրատեխնիկա	Էլեկտրաէ Էլեկտրատ էլեկտրամե էլեկտրատ Շինություն էլեկտրամ քոմփյութե
		Ճարտարագիտության	
		բակալավր	071301.03.
		071301.00.6	071302.02.
		071302.00.6	071302.03.
		Ճարտարագիտության	
		մագիստրոս	071301.03.
		071301.00.7	071302.02.
		071302.00.7	
08	Էլեկտրաէներգետիկ ճարտարագետ փորձագետ	Էներգետիկա Էլեկտրատեխնիկա	Էլեկտրաէ Էլեկտրատ էլեկտրամե էլեկտրատ
		Ճարտարագիտության	
		բակալավր	071301.03.
		071301.00.6	071302.02.
		071302.00.6	
		Ճարտարագիտության	
		մագիստրոս	071301.03.

		071301.00.7	071302.02.
		071302.00.7	
09	Էլեկտրաէներգետիկ ճարտարագետ շինարար	Էներգետիկա Էլեկտրատեխնիկա	Էլեկտրաէ Էլեկտրատ էլեկտրամ էլեկտրատ
		Ճարտարագիտության	
		բակալավր	071301.03.
		071301.00.6	071302.02.
		071302.00.6	
		Ճարտարագիտության	
		մագիստրոս	071301.03.
		071301.00.7	071302.02.
		071302.00.7	
10	Էլեկտրաէներգետիկ ճարտարագետ տեխնիկական հսկիչ	Էներգետիկա Էլեկտրատեխնիկա	Էլեկտրաէ Էլեկտրատ էլեկտրամ էլեկտրատ
		Ճարտարագիտության	
		բակալավր	071301.03.
		071301.00.6	071302.02.
		071302.00.6	
		Ճարտարագիտության	
		մագիստրոս	071301.03.
		071301.00.7	071302.02.
		071302.00.7	

»,

բ) 14-րդ տողի 6-րդ սյունակում «էլեկտրաէներգետիկա» բառը փոխարինել «ջերմաէներգետիկա» բառով,

գ) 32-րդ և 34-րդ տողերի 4-րդ և 5-րդ սյունակներում ավելացնել հետևյալ բառերը «Երկրաբանություն 054101.01.6; 054101.01.7»,

դ) 33-րդ տողը ուժը կորցրած ճանաչել,

2) 1-ին հավելվածի 34-րդ կետում «և ներկայացնում է Կոմիտե Միջոցառման ավարտից հետո մեկամսյա ժամկետում» բառերը փոխարինել «, կազմում է քաղաքաշինության բնագավառում մասնագետների թեստավորման հարցաշարերը ըստ թիրախային խմբերի և ներկայացնում է Կոմիտեի հաստատմանը» բառերով,

3) 2-րդ հավելվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«6) մասնագիտական աշխատանքային ստաժի 1 տարվա համար՝ բակալավրի համապատասխան որակավորման դեպքում շնորհվում է՝

ա. 1-ին կարգի մասնագետների համար՝ 24 գործնական կրեդիտ.

բ. 2-րդ կարգի մասնագետների համար՝ 16 գործնական կրեդիտ.

գ. 3-րդ կարգի մասնագետների համար՝ 10 գործնական կրեդիտ,»:

4) 2-րդ հավելվածի 2-րդ կետը լրացնել նոր՝ 7-րդ և 8-րդ ենթակետերով.

«7) մասնագիտական աշխատանքային ստաժի 1 տարվա համար՝ մագիստրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն կրթության որակավորման աստիճանի համապատասխան որակավորման դեպքում շնորհվում է՝

ա. 1-ին կարգի մասնագետների համար ՝ 40 գործնական կրեդիտ.

բ. 2-րդ կարգի մասնագետների համար՝ 27 գործնական կրեդիտ.

գ. 3-րդ կարգի մասնագետների համար՝ 17 գործնական կրեդիտ,»:

«8) աշխատանքային փորձառության 1 տարվա համար՝ համապատասխան բազային կրթությամբ և ՀՀ կառավարության 2024 թվականի ապրիլի 4-ի N 478-Ն որոշման համաձայն վերավորակավորման վկայականի առկայության դեպքում շնորհվում է՝

ա. 1-ին կարգի մասնագետների համար ՝ 24 գործնական կրեդիտ.

բ. 2-րդ կարգի մասնագետների համար՝ 16 գործնական կրեդիտ.

գ. 3-րդ կարգի մասնագետների համար՝ 10 գործնական կրեդիտ:»:

5) 2-րդ հավելվածի 6-րդ կետից հետո լրացնել նոր՝ 6.1 կետ.

«6.1. ՇՄԶ հավաստագիր չի տրվում, եթե մասնագետը չի ապահովել օրենքի 11.1-ին հոդվածի 6-8-րդ կամ 11.4-րդ հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված պահանջները:»,

6) 2-րդ հավելվածի 7-րդ կետում «15 կրեդիտ» բառերից հետո լրացնել «, 3-րդ կարգի մասնագետը՝ 5 կրեդիտ» բառերը,

7) 2-րդ հավելվածի 11-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: